

Ի Ա. ԽԱԶՆ ՏԷՐՈՒՆԱԿԱՆ

Արդ օրհնեալ էս փայտ կենաց և փրկութեան,
 Զոր տեսանողացն ծանուցեալ ըղիւսորհուրդ:
 Զքեզ Նշեան տապանըն դուշակեաց փրկող,
 Զծառոյն Սաբեկայ Գառն Աստուծոյ կախեալ:
 Սանդուխք Յակոբեան յերկրէ յերկինս ելից,
 Յուպըդ Մովսիսեան ծովաճերձող մեղաց:
 Զմահաշունչ զիշապն կըլանող հրաշիւք,
 Զող բարձող օձին ի յօրինակ ներձակ:
 Գաւազան ծաղկեալ Ահարոնի նորոյ,
 Զարքայն երկնաւոր պողպատեալ ի քեզ:
 Գայիսոն յաղթող Նոր Յետեայ բարձեալ,
 Կանգնէր Գողգոթան նշան ընդդէմ մահու:
 Կառք քառադէմ քերթէիւք բերեալ,
 Սուրբըն սրբեկից փառօք ի քեզ բաղմեալ:
 Լեառն դիտանոց իմանալի Սիոն,
 Սիւն իմաստութեան տանն Աստուծոյ բարձող:
 Լոյս Տեառն երեսաց նշանակեալ ի մեզ,
 Զէն երկիւղածաց դիմակ նեախց դաղանեաց:
 Բարունակ բերող ուրախարար պողոյն,
 Հնծան ողկուղի Ճշմարտութեան որթոյն:
 Սեղան հոգեւոր յերկնից իջեալ հացին,
 Խառնարան անոյշ կրկնալտակ աղբերն:
 Խորհուրդըն ծածկեալ ի սկզբանէ յաղագաց
 Քեւ յայտնեալ ցուցաւ Բանն ի Հօրէ ծնունդ:
 Զլոյս փառաց արկողն որպէս զօթոց ծածկոյթ,
 Մերկ կրեցեր մարմնով ընդ մերկութեան մերոյ:
 Արեամբն Աստուծոյ ի քեզ հոսեալ ներկար,
 Եւ յահալ բոցոյն ոչ տապացեալ կիզար:
 Աթոռ անկղին քառակերպեան գլտար,
 Եւ կառք հըզօրին հեծելութեան մարտին:
 Որով ի դժոխս իջեալ փրկեաց զգերեալն,
 Եւ քեւ պսակեաց զեկեղեցի իւր սուրբ:
 Պահէա՛ ի հաւատս Ճշմարտոյ ըզսա,
 Ի սմա և զմանկունս հաւատոյ անշարժ:
 Զգիր պարտեաց մերոց լուսացես ջրոյն բխմամբ,
 Ի կեանս գրեցես արեամբն ի քեզ մածեալ:
 Եւ յորժամ ծագիս յարեւելից նըշան,
 Շնորհեա՛ մեզ դասիլ խաչակրօնից դասուցն:
 Ընդ նոսին երգել միշտ օրհնութիւն յաւէտ,
 Սուրբ Երրորդութեանն փառք յաւիտեանս ամէն:

Ի ԹԱՂՈՒՄՆ ԵՒ ՅԷԶՍ ՔՐԻՍՏՈՍԻ Ի ԴԺՈՒՄ

Անդրանիկ կուսին գնի ի կոյս գերեզմանի այսօր
 Մեռելոց լինել պտուղ:
 Հոգւով քարոզել գընաց հոգւոցն որք ի բանտի էին
 Աստուածացեալ հոգին:
 Տեսեալ գունապանքըն դժոխոց զաղբայն ի մարտ յաղթող
 Սարսեալ սաբրեալ դողան:
 Դրունք պղնձիք և երկաթի փականք մանրեալ եղեն
 Հարեալք խաչին զիջու:
 Զայնեաց Միածինն իշխանութեամբ համաշարչար անձանցն
 Զայս քաղցրութեան բարբառ:
 — «Ո՛վ որք ի կապանս՝ եկայք ելէք արտաքս ի կոյս շնորհաց
 Զոր ծագեցի արեամբ:
 Ո՛վ որք ի խաւար՝ տուք յիս զձեռն, և պնդեցայք ի խաչս
 Որով փրկեցի ըզձեզ:
 Ելի ի բարձունս և գերեցի զգերութիւնդ ի յիս
 Դարձեալ ի Տէր զաւարդ:
 Բաշխեմ ձեզ պարգեւս, ո՛վ ննջեցեալ հոգիք: զարեանս իմ շնորհ
 Եւ զթողութիւն մեղաց:
 Զոր ևս ի յերկնից իբր զփայլակն արկի յերկիր խոնարհ՝
 Կոխան ետու ոտից:
 Ըննա ի յերկրէ՝ ջուրն և արիւն որ ի կողէս հեղաւ՝
 Հալածական արար:
 Յօգըն վերացաւ, և տարածեալ զբաղունկս ի խաչն ընդդէմ
 Անտի մերժեաց զնա:
 Փախեաւ ի յամրոցդ այգի ի դժոխսդ, և ևս հետոցն ըզկնի
 Գամ դատապարտ առնել:
 Յայսմանէ խիթայր, և ըմբռնեալ եղեւ ի սպառ վիշապն
 Եւ դուք զերծեալ հոգիք:
 Եկայք միացեք խաղաղութեամբ յիս ապաստան յուսով,
 Մինչ ի կրկին գալուստն»:
 Այս անօրէնութիւն փրկչին եղեւ առ ննջեցեալսն այսօր
 Ի ստորին կողմ երկրի:
 Ուստի ել փառօք վերոյ երկնից և հրկինաց զօրաց
 Զայս ամենայն լըցեալ:
 Նըմա համաձայն որք կենդանիք, նոյն և մեռեալք տուք փառս
 Որով ի կեանս գրեցայք:
 Այժմ և հանապաղ օրհնեալ է Տէր Յիսուս, օրհնեալ դարձեալ
 Եւ վերստին օրհնեալ:

(ԺԳ դարու տաղարանէ մը)